

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/2

29 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց Ախթալայի քաղաքապետի 09.07.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 31.05.2014 թ-ի թիվ 1010102 ստուգման ակտի 12-րդ կետի, ինչպես նաև Վանաձորի ՏՀՏ պետի 30.06.2014 թ-ի թիվ 495 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.03.2014 թ-ի թիվ 1010102 հանձնարարագրի «Ախթալա համայնքի Սվինեց թաղամասի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության լուծարային ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 31.05.2014 թ-ի թիվ 1010102 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 12-րդ կետով առաջադրված պարտավորությունների հետ գանգատաբերը համաձայն չէ:

Ստուգման ակտի 12-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունը որպես նախադպրոցական ուսումնական հաստատություն իրականացրել է նախադպրոցական կրթական ծրագրեր: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածին համապատասխան նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, որը լիցենզավորող լիազոր մարմին է հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ընկերությունը ստուգվող ժամանակաշրջանում չունի համապատասխան լիցենզիա:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի, որը համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 8.1-ին կետի նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման համար կազմում է 10.000 դրամ, տասնապատիկի չափով՝ 100.000 դրամ, բայց ոչ պակաս 500.000 դրամից, ինչպես նաև վերը նշված հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններում նշված խախտումներ հայտնաբերելու դեպքում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում: Ընդամենը՝ 510.000 դրամ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքով նախատեսված բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են միայն օրենքով և լիցենզավորման կարգերով»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինների կողմից բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Քննարկվող դեպքում, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված աղյուսակի 9-րդ բաժնի 1-ին կետի համաձայն, նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման համար տրվում է բարդ ընթացակարգով լիցենզիա: Հետևապես, բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ-ի հուլիսի 9-ի թիվ 808-Ն որոշմամբ Հավելված 1-ով սահմանված է նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը, որի 5.2. կետի համաձայն. «Սույն կարգի գործողությունը համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատությունների վրա տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից»:

Սակայն հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ-ի ապրիլի 4-ի թիվ 320-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ-ի հուլիսի 9-ի թիվ 808-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ-ի հուլիսի 9-ի թիվ 808-Ն որոշման 5.2. կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Սույն կարգի գործողությունը համայնքային ենթակայության չլիցենզավորված նախադպրոցական հաստատությունների վրա տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ ժամանակահատվածի լրանալը դրանք լիցենզավորման համար կարող են դիմել սեփական նախաձեռնությամբ»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտի 12-րդ կետով պարտավորություններն առաջադրվել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Հետևապես, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 5-րդ մասի դրույթներով, ստուգման ակտի 12-րդ կետը ենթակա է չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 31.05.2014 թ-ի թիվ 1010102 ստուգման ակտի 12-րդ կետը:

2. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետը վերանայել ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 30.06.2014 թ-ի թիվ 495 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ